Մենավաճառի ենթարկված բամբակի գների մասին. — 1) Ներկայ տարւայ սեպտ. 11–ին ընդունված բամբակի մենավաճառի օրէնքի հիման վրա կառավարութեան ձեռք բերելիք բամբակի փթի դինը սահմանել քառասուն և ինը ր. յիսուն կոպէկ (49ր. 50կ.):

Ծանօթ. — 1. Ցիշեալ դինը համարել Ֆրանկո–պետական պահեստ:

Ծանօթ. — 2. Ջմամլած բամբակի փթի դինը հաշւել վեց բուբլով պակաս:

Ծանօթ. — 3. Ջմաքրած բամբակը ընդունւում է տիրոջ հաշւով այն մաքրելուց յետոյ:

Ծանօթ. — 4. Բարդանները, տոպրակներն ու առհասարակ տարբեր բամբակի պատկանելիքներն են, ուստի դրանց համար առանձին վարձատրութիւն չի տրւում:

Նախկին ռուսական կայսրութեան օրէնքների գործադրման մասին Հայաստանի տերիտորիայի վրա. — Հայաստանի Հանրապետութեան տերիտորիայի վրա գործադրւում են ժամանակաւորապէս նախկին ռուսական կայսրութեան օրէնքները, Ժամանակաւոր Կառավարութեան, Անդրկովկասեան Կոմիսարիատի և Սէյմի ու Հայաստանի Խորհրդի փոփոխումներով և լրացումներով:

(Հաստ. դեկտ. 6–ին 1918թ.)

Սենատի և դատաստանական ատեանի ներմուծման մասին Հայաստանի տերիտորիայի սահմաններում. — Յօդ. 1. Երևան քաղաքում բացւում է դատաստանական ատեան երկու դեպարտամենտներով՝ քաղաքացիական և քրէական:

Յօդ. 2. Երևան քաղաքում բացւում է սենատ բաղկացած երկու վճռաբեկ դեպարտամենտներից՝ քաղաքացիական ու քրէական՝ որոշումները բեկանելու խնդիրների վերաքննութեան համար:

Յօդ. 3. Սենատի երկու դեպարտամենտների ընդհանուր նիստը քննում է այն բոլոր միւս խնդիրները, որոնք ենթարկւում էին ռուսական կառավարչական սենատի միւս դեպարտամենտներում և ընդհանուր (միացեալ) նիստերին:

Յօդ. 4. 1470–ը քաղաքացիական դատավարութեան կանոնադրութեան մէջ վերացւում են:

(Հաստ. դեկտ. 6–ին 1918թ.)

Հայաստանի Հանրապետութեան մէջ հաշտարար բաժանմունքների և քննիչական մասերի վերակազմութեան և նորերի բացման մասին. — Հայաստանի Հանրապետութեան մէջ հաստատւում են հետևեալ հաշտարար բաժանմունքները և քննիչական մասերը. —

I. Երևան քաղաքում հաստատւում են երկու հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր:

1) Երևանի քաղաքային առաջին հաշտարար բաժանմունք և քննիչական մաս և

2) Քաղաքային երկրորդ հաշտարար բաժանմունք և քննիչական մաս:

II. Երևանի գաւառում հաստատւում են երեք հաշտարար բաժանմունք և նոյնքան քննիչական մասեր: